

206. Առաքելական Աթոռոյ Արք. Ճակովբեանց

անուամբ, որ կոչուած է նաև ՔՍ.Ա.ԿԱՆ ԱԹՈՌՈՒՅՆ ՍՐԲՈՅՆ ՅԱԿՈԲՍ ՏԵՍՈՆ ԵՂԵՐՈՒ կամ Ս. ԱԹՈՌՈՒՅՆ ՏԵՍՈՆ ԵՂԵՐՍՐ ԱՐԳԱՐ ԱՌԱՔԵԼՈՅՆ ՅԱԿՈԲՍ: Այս տպարանը հաստատուած է Կ. Պօլսոյ նախկին պատր. Ա. Պօլսեցի Պօղոսի ձեռամբ որ 1828-38 կառավարած է Երուսաղէմը «Ծայրագոյն կառավարիչ» տիտղոսով: Բուն գահակալը՝ Նիկոմիդացի Գարրիէլ պատր. այդ տարիներուն հոնկէ հեռացուցուած՝ կը վարէր Եզմիրի առաջնորդութիւնը: — Տպարանը գործունէութեան փայլուն շրջան մը բոլորած է Եսայի պատրիարքի օրով, մանաւանդ անոր պաշտօնավարութեան Ա. տասնամեակին (1865-75): Այս արուեստագէտ պատրիարքն արեւանկաբնութեան, գալուստաձուլման և գունատր պատկերներու ճիշդեր ալ աւելցուցած է՝ որոնք լքումի դատապարտուած են իրմէ յետոյ: Իր մահէն վերջ նախկին գործունէութիւնը չէ կրցած շարունակել այս տպարանը որուն կարծես մենաշնորհը դարձած է միայն եկեղ. գրեանց տպագրութիւնը: — Վանքին այս վաղեմի գործատունը նախ կը գտնուէր 1727 ին կառուցուած՝ հին տիպ բազում գիրքեր պարունակող Մատենադարանի շէնքին մէջ. բաւական ժամանակ վերջ մատուցն ու տառերն այլու փոխադրուած են. հիմայ կը գտնուի վանքին շրջափակին մէջ՝ Ա. Յակոբայ եկեղեցիին հարստակողմը, որ ատենօք ուխտաւորի ուղտերու և ձիանին յատկացուած մեծ ախոռ մըն էր և որուն վրայի յարկը կը գրաւէն ուխտաւորաց սենեակները: — Ե. Տնտեսան, յայտնի ազգ. գործիչն ու տպագրիչը 1867-8 երկիցս Երուսաղէմ հրախրուելով գացած է իբր տնօրէն նոյն տպարանին և ուսուցիչ երգեցողութեան: — 1865 ին Եսայի պատր. Պօլիս գալուն Յ. Միսնեախեանէ գնած է անոր մայր-տառերը զորս տարած է վանք: Ս. Յակովբեանց այս գործատան անդրանիկ սատարողը եղած է Եուսուֆեան Պետրոս որ նշանաւոր մեկնեալ մըն էր արդէն, օժանդակած ըլլալով Վեննայի Մխիթարեանց և Չմիւսնիոյ Հայոց: Յետոյ կու գան 7 Յակոբ Աշրգեան և Պօլսոյ Ներսեսեանք: Առաջինը Սաղիմայ վանուց կտակած զովորով իր անձնական կալուածոց տարեկան արդիւնքին 10% (տարեկան շուրջ 3000 դր.) յատկացուցած է տպարանին, ի յիշատակ իր ազգատոհմին՝ զասագիրքերու հրատարակութեան համար: Իսկ 1891 ին, երբ Խրիմեան հաշիկ արսոր էր հոն, Ներսեսեանք անոր առաջարկութեամբ նու իրած են արագատիպ անուղարձ մամուլ մը՝ «Համարարատ» ի տպագրութեան համար: Գտնուած են երկրորդական սատարողներ ալ, որոնցմէ՝ հնդկահայ Սեբ Արքարեան «Միխայէլ Ատրի» ի Բ. տիպին և Արքանամ Բաշա Բարթոլոմէ Պօլսոյ



ԵՍԱՅԻ ՊԱՏՐ. ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

դոս Պէյ Աշրգեան «Երուսաղէմի պատմութեան» ծախքերը հոգացած են: — Երուսաղէմի այս տարուան օրացոյցին ձևակար 75ամեակը կը ծանուցուի նոյն տպարանին (1837-1912), ինչ որ բացարձակապէս սխալ է, քանի որ 1833 Յնվր. 1 ին հոնկէ լոյս ընծայուած անդրանիկ գիրքն է — մեր սրբաբաններուն համեմատ — **ՏԵՏՐԱԿ ԱՊՕՐԱՄԱՏՈՅՅ ՎԱՍՏ ԶԵՐՄԵՆԱՆՈՅ ԱՊՕՐԱՍԻՐԱՅՐ**: Իսկ այնուհետեւ մինչեւ այսօր հոն տպագրուածներն են. — Տեսութիւն Անբառամ ծաղիկ մեծացուցեցին (1834), Մեկնութիւն «Հայր մերի» (1836), Պափոխի տեսարակ (3 տարրեր անգամներ), Պէշ տէնը ֆերքի, Տեսարակ գովեստի (նայ. և տաճկ.), Յուցակ Ս. Յարութեան տաճարի հանդիսաւոր արարողութեանց (1839), Խորհրդաւորիւն Ս. Պատարագի (1842), Մաշտոց կանոնեայ Մկրտութեան (1843), Բառարան «Չամազանութիւն» գրքի արար և պրակ. բառերու (1844), Յովսէփ Գեղեցիկ (1849), **ՄԵԿՆՈՒՄՔԻՆ ԲՅՈՂՈՍԻ** (1850), Երեւոյք կրից (1851), Հայելի վիրաց, Տարերք իմաստասիրութեան (1852), Մեկնութիւն յայտնութեան, Կտակագիր հոգեշան բանից (1853), Տրամարանութիւն (Գր. Փշաւմաչեան), Բացատրութիւն հրատարման և գղջման (1854), Տեղագրութիւն Երուսաղէմի (բրգմ. Չամուրճեան) 1855, Մատենագրութիւն նախնեաց (Նարեկացոյն և Վանքամ Վրդ. ի ճառք) 1856, Ուսումն բարոց (բրգմ.) 1857, **ԱՍՏՐԱԳՐՈՒՄՔԻՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ** (1859), Ճառ. հաղորդութեան, Պատասխանիք Մխիթ. քննչ. Սկեռացոյ (1860), **Ժամանակագրութիւն Միխ. Աստուրոյ** (1860, իսկ Բ. տիպը 1871), Հերքումն անիրաւ գրաբարտութեանց և աղերս առ ընդձ. Ազգ. ժողով